ԳՐԵՏԱ ՅԱԿՈԲԵԱՆ
ՔՆԱՐԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

ՊՈԼՍՈՅ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ ԱԶԳԱՅԻՆԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ԽԱՉՈՒՂԻՆԵՐՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.132

ԱՄՓՈՓՈՒՄ

Յօդուածում դիտարկուած են Պոլսոյ Կեդրոնական վարժարանի հիմնադրման եւ գործունէութեան հետ կապուած հարցեր: Վարժարանի պատմութեան ընթացքը վերլուծուած է աշխարհաքաղաքական եւ գրամշակութային իրադարձութիւնների համապատկերում: Ներկայացուած են նաեւ վարժարանի նշանաւոր ուսուցիչներն ու շրջանաւարտները: Բնութագրուած են վարժարանի կառավարման, ուսումնական ծրագրերի եւ կրթական արդի չափորոշիչներին դրանց համապատասխանութեան հետ կապուած հարցեր: Դիտարկուած է վարժարանի գործունէութիւնը՝ որպէս կրթական եւ մշակութային նշանակալի իրադարձութիւն արդի մարտահրաւէրների համատեքստում: Վարժարանի եւ Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ-ի համագործակցութիւնը բնութագրուած է Հայրենիք-Սփիւռք կրթամշակութային փոխազդեցութեան շրջանակներում:

Բանալի բառեր և արտահայտություններ. *Պոլսոյ Կեդրոնական վարժարան, կրթամշակութային աւանդոյթներ, կրթական ծրագրեր, Հայրենիք-Սփիւռք համագործակցութիւն, ազգային դիմագիծ:*

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հայ ժողովուրդն իր պատմական հայրենիքից մինչեւ աշխարհի հեռաւոր ծայրերը բոլոր ժամանակներում նպատակ է ունեցել կենսունակ պահելու իր

դպրոցը, որը բախտորոշ դեր է կատարել գոյապայքարի ոգորումներում: Հայ ազգային դպրոցի գաղափարական հիմքերի ձեւաւորման սկզբնական օրերից մինչեւ ներկայ ժամանակներ դպրոցը կատարել է ազգապահպան կենսականօրէն կարեւոր գործառոյթ՝ յատկապէս Սփիւռքում անգնահատելի դեր խաղալով ազգային ինքնութեան պահպանման եւ հայ կրթամշակութային պատմութեան ընթացքի մէջ:

Հայ դպրոցի պատմութեան մեջ պատմական Պոլիսը իր ուրոյն տեղն ունի: Այստեղ հաստատուած հայկական վարժարաններն ամփոփում են Պոլսոյ պատմութեան, սոցիալական ու կրթամշակութային կեանքի, ժողովրդագրական տեղաշարժերի վերաբերեալ ուշագրաւ վաւերագրեր:

139 տարի առաջ ուսուցիչ եւ մտաւորական պատրաստելու նպատակով Պոլսոյ Հայոց Պատրիարք Ներսէս Վարժապետեանի, նուիրեալ մտաւորականների ու բարերարների միասնական ջանքերով հիմնուած Ազգային Կեդրոնական վարժարանը սոսկ ուսումնական հաստատութիւն չէ, այլ ազգային ոգու, մշակոյթի ջահակիր, որ պահպանում է հայ դպրութեան դարաւոր աւանդոյթները: Վարժարանի՝ Հայաստանի կրթական միջավայրի հետ համագործակցութիւնը նոյնպէս ուսանելի վկայութիւն է:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Յօդուածը պատրաստուել է Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի եւ Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի՝ 2023 թ. յայտարարած «Ուսեալ ազգի վկայագրերը» մրցոյթի շրջանակներում՝ իբրեւ նախագծային աշխատանք, որին մասնակցութիւն են բերել մանկավարժական համալսարանի բանասիրական բաժանմունքի ուսանողներ Տատիանա Աբդոյեանը, Նարէ Ալվանդեանը, Անահիտ Բաղալեանը, Ելենա Թումոյեանը, Նինա Ճուղուրեանը, Լուսինէ Սաղղեանը եւ Մարիամ Վարդանեանը: Աշխատանքը ներկայացուել է 2023 թ. Ապրիլ-Յունիս ամիսներին երկու փուլով տեղի ունեցած մրցոյթում եւ արժանացել երկրորդ մրցանակի:

Յօդուածը շարադրուած է պատմահամեմատական մեթոդով: Կեդրոնական վարժարանի ուսումնական գործունէութեան նկարագիրը տրւում է կրթական չափանիշների այսօրուայ ըմբռնումների համատեքստում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայ դպրոցի պատմութիւնը նաեւ հայ ժողովրդի պատմութիւնն է՝ նրա ինքնութեանը սպառնացող վտանգներով, ուսուցիչների բոլորանուէր զոհաբերութիւններով: Հայ մտաւորականութեան «դպրոցասէր» մօտեցումը վկայում է մի կողմից անցեալի փառաւոր օրերի հարստութիւնը, միւս կողմից՝ դժուարութիւններն ու դրանց յաղթահարման անկասելի կամքը:

Անցյալի յիշատակները վառ պահելն ու դրանց խորհուրդը վերըմբռնելը կարեւոր է՝ գիտակցելու ներկայի մարտահրաւէրները եւ քայլելու դէպի ապագայ. «*Ժողովուրդ մ'իր անցեալէն զատելը լիովին մահացնել է, մի միայն անցեալին մէջ պահելը՝ հաշմել*» **(«Հայկական նամականի», 1872)**, – նկատում է արեւմտահայ մանկավարժութեան երեւելիներից Մատթէոս Մամուրեանը: Իսկ դեռեւս 19-րդ դարում ձեւաւորուած ու դժուարին ճիգերով մինչ օրս իրենց գոյութիւնը պահպանող վարժարանների ու մանկավարժական մտքի պատմութեան ուսումնասիրութիւնը հնարաւորութիւն է ընձեռում ոչ միայն արձանագրել ու ճանաչել անցեալի ձեռքբերումները, այլեւ իմաստաւորել դրանք, մանաւանդ որ Պոլսում եւ Սփիւռքում (Պոլիսը դասական իմաստով Սփիւռք անուանել դժուար է) այդ վարժարանների գոյութիւնը օրինակելի է նաեւ հայրենի ուսանողութեան ու վաղուայ մանկավարժների համար:

Գրիգոր Փեշտիմալճեան, Մատթէոս Մամուրեան, Մատաթիա Գարագաշեան, Ռեթէոս Պէրպէրեան, Մկրտիչ Էսայեան, Թովմաս Թերզեան, Յովհաննէս Հինդլեան եւ էլի շատ ուրիշներ ստեղծել են մանկավարժական մի ամբողջ «դպրոց» եւ ուսանելի ճանապարհ ուրուագծել յետագայ սերունդների համար:

Աներկբայ է Օսմանեան կայսրութեան մէջ հայերի ներդրման դարաւոր պատմութիւնը **(Ստեփանեան Յ., 2012)**, ակնյայտ է նաեւ արեւմտահայ կրթական

կեանքի աննախադէպ վերելքը թէ՛ գաւառներում, թէ՛ Պոլսում: Յիշենք Խարբերդի, Զմիւռնիայի, Կարինի կրթական հարուստ անցեալը, Պոլսոյ մէջ հաստատուած հայկական վարժարանները: Պոլսի եւ գաւառների հայկական վարժարանների ու նրանց հարուստ պատմութեան մասին ուսումնասիրութիւններ է կատարել պոլսահայ մտաւորական Գէորգ Յակոբեանը: Դրանք ամփոփուել են «Պատմութիւն իսթանպուլահայ ուսումնական կեանքի եւ կրթական հաստատութիւններու» (2016) եւ «Հայոց կրթական հաստատութիւններու պատմութիւն՝ օսմանեան գաւառներու մէջ» ծաւալուն հատորներում **(Յակոբեան Գ., 2024)**:

20-րդ դարի սկզբին Օսմանեան կայսրութեան տարածքում շուրջ 2000 վարժարաններից այսօր Պոլսոյ մէջ գործող 17 դպրոցներով համայնքը անհաւատալի ջանասիրութեամբ մաքառում է հայեցի սերունդներ պատրաստելու մտահոգութեամբ, վկան՝ Ազգային Կեդրոնական վարժարանը:

Պոլսոյ պատմական Ղալաթիա թաղամասում՝ հնագոյն Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու հարեւանութեամբ գտնուող Կեդրոնականը հիմնուել է 1886-ին՝ որպէս *«մանչերու վարժարան»*, որ *«ոչ միայն համապատասխանէ մայրաքաղաքիս մէջ հաստատեալ բազմաթիւ վարժարանաց, այլ նաեւ... տայ այն արդիւնքները, զորս անկարելի է յուսալ օտար կրթարանաց մէջ»* **(Յուշամատեան..., 1986)**: Այստեղ յատկանշական է ոչ միայն ընդունելի մակարդակի ապահովման պահանջը, այլեւ առաջին հերթին «յուսալ» բառի նշանակութիւնը, որ ուղիղ իմաստով կապւում է ինքնութեան եւ ազգային դաստիարակութեան տեսլականի հետ:

1884 թուականին «մեծ խասգիւղցին, որ էր Վարժապետեան Պատրիարքը» **(ԳԱԹ, թիւ 810-Հ)**, վախճանուեց՝ այդպէս էլ չտեսնելով իր յղացած կրթօջախի գործունէութիւնը: Իսկ թէ ինչ կարեւորութիւն ունէր վարժարանի հաստատումն ազգային-հոգեւորական մեծ գործչի համար, կարելի է պատկերացնել՝ ելնելով Պատրիարքարանի նորոգութեան եւ վարժարանի հաստատման հարցում հենց վերջինիս նախապատուութիւն տալու հանգամանքից:

Վարժարանի բացումը կարեւոր իրադարձութիւն էր հայութեան կեանքում. այդ փաստին արձագանգել է ժամանակի հայ մամուլը, ինչպէս «Մասիս», «Արեւելք» եւ այլ թերթեր: Մասնաւորապէս «Արեւելք»-ը, այն «*շաբթուս կարեւորագոյն դէպքը*» համարելով հանդերձ, շատ աւելի առարկայական ու խոր հարցադրումների ճանապարհով է գնում, որ քննութեան նիւթ է նաեւ այսօրուայ դպրոցի համար: Ելնելով մուտքի քննութիւն յանձնած աշակերտների գիտելիքների անբաւարար մակարդակից՝ դնում է Կեդրոնականին մատակարարող *«ազգային հանրային վարժարանաց միջեւ կրթական* ***համերաշխութեան****»*, *«ուսմանց յայտագրի եւ մեթոդի միօրինակութեան»*, այն է՝ ուսումնական ծրագրի եւ մօտեցումների նոյնականութեան խնդիրը (**«Արեւելք»**, **1886** - ընդգծումը՝ բնագրում – հեղինակներ), մի յանձնառութիւն, որ, ինչպէս ցոյց է տուել ժամանակը, յաջողութեամբ է իրագործուել. «*Կեդրոնականը բազմաթիւ ծառայութիւնների հետ նաեւ կարեւոր դեր է խաղացել թաղային վարժարանների վիճակը բարելաւելու, կրթական ծրագրերը բեռնաթափելու եւ նախակրթարանների ուսումնադաստիարակչական աշխատանքները համակենտրոնացնելու... գործում*» **(Ոսկանեան Շ., 2009)**:

Վարժարանի ուսման ընթացքը սահմանուած էր 5 տարի՝ 2 շրջաններով: Առաջին շրջանի համար առանձնացուած էր 3, իսկ երկրորդի համար՝ 2 տարի ժամանակահատուած: Ուսումնական ծրագիրը կազմում էին հետեւեալ առարկաները՝ կրօնագիտութիւն, հայոց լեզու եւ գրականութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն, բնական գիտութիւն, օսմանեան լեզու, ֆրանսիական լեզու, վաճառականութիւն, սղագրութիւն, իրաւագիտութիւն: Ուսումնական ծրագրերում ներառուած էին նաեւ արհեստագործական առարկաներ: Ուսանողները վարժարան ընդունուելու համար պարտաւոր էին յաջողութեամբ յանձնել բանաւոր քննութիւններ հետեւեալ առարկաներից՝ Հին եւ Նոր Կտակարանի պատմութիւն, աշխարհաբար շարադրութիւն, գրաբարից աշխարհաբարի թարգմանութիւն եւ հակառակը, ֆրանսերէն ուղղագրութիւն, թուաբանութիւն, երկրաչափութիւն: Միջանձնային յարաբերութիւնների եւ

ծրագրերի մասին մանրամասն ներկայացուած է «Պաշտօնագիր, կանոնագիր եւ յայտագիր խնամակալութեան Ազգային Կեդրոնական Վարժարանին Ղալաթիոյ» գրքոյկում **(«Պաշտօնագիր...», 1886)**:

Վարժարանի հիմնադրման օրից ի վեր միմեանց յաջորդող ուսուցիչներ եւ տնօրէններ Մինաս Չերազի, Յարութիւն Մոստիչեանի, Գառնիկ Բարունակեանի, Յովհաննէս Հինդլեանի, Մարտիրոս Նալբանդեանի, Աստուածատուր Խաչատուրեանի, Գեղամ Գավաֆեանի, Պետրոս Ատրունու, Յովհաննէս Մերտինեանի, Համբարձում Յարութիւնեանի, Հրանդ Տէր-Անդրէասեանի եւ այդ պաշտօններում բարենորոգչական լայն ձեռնարկումներ իրականացրած այլ մտաւորականների ջանքերի շնորհիւ վարժարանը ունեցաւ վերելքների, երբեմն նաեւ՝ անկումների շրջաններ: Կեդրոնականը տնօրէնութեան եւ խնամակալութեան համագործակցութեան արդիւնքում ցայսօր շարունակում է իր ազգանուէր գործունէութիւնը Սիլվա Գույումճեան-Մարկոսեանի՝ արդէն 45 տարիների պատկառելի շրջան բոլորած ղեկավարութեամբ՝ պահպանելով ազգային դիմագիծը:

Կեդրոնական վարժարանում տարբեր տարիներին սովորել կամ դասաւանդել են հայ մշակոյթի նշանաւոր գործիչներ, մտաւորականներ Մատթիա Գարագաշեանը, Յովսէփ Շիշմանեանը (Ծերենց), Ռեթէոս Պէրպէրեանը, Գաբրիէլ Նորատունկեանը, Եղիա Տէմիրճիպաշեանը, Յակոբ Պարոնեանը, Ստեփան Կուրտիկեանը, Հրանդ Ասատուրը, Տիրան Չրաքեանը (Ինտրա), Լեւոն Շանթը, Յակոբ Օշականը, Վահան Թէքէեանը, Արշակ Չօպանեանը, Կոստան Զարեանը, Զապէլ Ասատուրը (Սիպիլ), Մատթէոս Իզմիրլեանը, Մաղաքիա Օրմանեանը, Եղիշէ Դուրեանը, Գարեգին Սրուանձտեանցը, Կոմիտասը: Կեդրոնականի նշանաւոր սաներից են եղել Հրաչեայ Աճառեանը, Արշակ Ալպօյաճեանը, Յակոբ Սիրունին, Միսաք Մեծարենցը, Լեւոն-Զաւէն Սիւրմէլեանը, Երուխանը, Յակոբ Մնձուրին, Օննիկ Չիֆթէ-Սարաֆը, Նիկողոս Սարաֆեանը եւ ուրիշներ: Այս առումով հետաքրքրական է Պոլսոյ Պատրիարք Շնորհք Արք. Գալուստեանի խօսքը

վարժարանի 100-ամեակի առիթով. *«Կեդրոնականը եթէ մինչեւ իսկ ոչինչ տրուած ըլլար, եւ լոկ նպաստէր կազմաւորումի Աճառեանի մը, Չօպանեանի մը, Ալպոյաճեանի մը, Չաքըրեանի մը, Երուանդ Մանուէլեանի մը եւ Մեծարենցի մը ու նմաններուն, արդէն իսկ ծառայած կ'ըլլար իր նպատակին...»* **(«Կեդրոնական...», 1986)**:

Յատկապէս ուշագրաւ է ուսուցիչ եւ աշակերտ Չօպանեանի վերաբերմունքը իր «պաշտած» վարժարանի հանդէպ: 1952-ի Յունուարի 16-ին Փարիզից Պոլսի Պատրիարք Գարեգին Արք. Խաչատուրեանին գրուած նամակում յոյս է յայտնում, որ իր ժամանակին *«արեւմտահայութեան ամէնէն հեղինակաւոր մտաւորական, ուսուցչական ուժերը, ինչպէս եւ ֆրանսիացի կարող ուսուցչապետներ»* համախմբած վարժարանը *«նոյն համակրական նկարագիրն ունի»* **(Չօպանյան Ա., 1980)**: Զանազան առիթներով եւ այս նամակում էլ խոստանում է վարժարանի մասին իր յուշերը հրատարակել: Վարժարան մուտքի մասին մէկ պատառիկ միայն լոյս է տեսել «Պայքար» օրաթերթի 1950-ի Դեկտեմբերի 16-ի համարում **(«Պայքար», 1950)**: Իսկ ուսուցիչների մասին բաւական ծաւալուն սեւագիր նօթերը «Իմ կեանքիս վէպը» («Կեանքիս վէպը») կամ «Իմ յուշերս» խորագրերի տակ եւ գրեթէ նոյնական բովանդակութեամբ պահւում են Եղիշէ Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի Չօպանեանի ֆոնդում **(ԳԱԹ, թիւ 808-811-Հ, 812-813-Հբ)**:

Նոյն այդ շրջանում (1947) Թորոս Ազատեանը իր համար պատասխանատու յանձնարարութիւն էր դիտարկում Կեդրոնականի 60-ամեակի յիշատակարանի պատրաստութիւնը **(«Արեւմտահայ գրողների նամականի», 1972)**:

Վարժարանի առաջին տասնամեակների գործունէութեան ուշագրաւ դրուագներից մէկն էլ վկայում է վարժարանի սան՝ *«Կեդրոնականի... 17-րդ տնօրէնը»*՝ Յակոբ Սիրունին, որ սանի հանգամանքով 1908-ին թուրքական բանտն էր ճաշակել, ապա եւ Սահմանադրութեան թոհուբոհի մէջ դարձել «տնօրէն»՝ *«հոգ չէ թէ հազիւ մէկ-երկու շաբաթ: Մէկ օրուան իշխանութիւնը մի՛շտ իշխանութիւն է»* **(Սիրունի Յ., 2006)**:

Յատուկ նախագծի համար մեր խնդրանքով պատրաստուած ուղերձում վարժարանի տնօրէն Սիլվա Գույումճեանը մեր օրերի համար տալիս է սաների նոր անուններ՝ Արա Կիլեր, Մկրտիչ Մարկոսեան, Շահան Արծրունի «եւ դեռ քանի քանիներ»:

Այժմ Կեդրոնական վարժարանն ընդունում է երկսեռ աշակերտութիւն՝ «*քառամեայ լիսէի բաժինով*» **(Յակոբեան Գ., 2016)**, ինչը համապատասխանում է մեր աւագ դպրոցի կրթական մակարդակին:

Պոլսահայ եւ առհասարակ Սփիւռքի վարժարանների շարքում Կեդրոնականը բարձր համբաւ ունի. շրջանաւարտները նշանակալի յաջողութիւններ են ունենում նաեւ համալսարաններ ընդունուելիս: Վարժարանը շարունակում է իր գործունէութիւնը շուրջ 200 աշակերտներով եւ 45 ուսուցիչներով եւ հաւատարիմ է շուրջ մէկուկէս դար առաջ որդեգրած սկզբունքներին՝ դրանք համապատասխանեցնելով ժամանակակից կրթութեան չափանիշներին, չնայած հանդիպող ամենատարբեր դժուարութիւններին: Այս առումով բնութագրական է մտաւորական, թարգմանիչ Արփի Թոթոյեանի խօսքը. «*...Շատեր ամէն վերամուտի անձկութեամբ քննեցին օրաթերթերու չորրորդ էջերը, հոն Կեդրոնականի վերաբացումի ծանուցումը չգտնելու վախով. սակայն ծանուցումը միշտ ներկայ, տարուէ տարի ճոխացած, եկաւ հեգնելու այդ մտահոգութիւնը, կրթական նորագոյն զարգացումներու – լեզուի աշխատանոց, համակարգիչ սարքաւորում – աւելիսն ալ բերելով*» **(«Յուշապրակ...», 1977)**:

Արեւմտահայ դպրոցների կողքին կրթամշակութային իւրայատուկ առաքելութիւն ունեն նաեւ սանուց միութիւնները, որոնք ինչ-որ տեղ խօսում են կրթական հաստատութիւնների ձեւաւորած արժեհամակարգի մասին: Դեռեւս 1914 թուականին հրատարակուել է «Կանոնագիր Ազգային Կեդրոնական վարժարանի նախկին սաներու միութեան» գրքոյկը, որտեղ սահմանւում էին միութեան նպատակը, անդամների ընտրութեան կարգն ու գործունեութէան շրջանակը: Իսկ 1947 թուականին Պոլսում հիմնադրուեց Կեդրոնական սանուց միութիւնը, որի կարեւոր նախաձեռնութիւններից մէկը դարձաւ «Հանդէս

մշակոյթի» պարբերականի՝ շուրջ երկու տասնամեակ տեւած հրատարակութիւնը: 1967 թուականին բացուեց Ամերիկայի Էսայեան-Կեդրոնական սանուց միութիւնը, որը 1977-ին լոյս է ընծայել «Էսայեան-Կեդրոնական սանուց միութիւն. 1967-1977» գիրքը: Կեդրոնական սանուց միութիւններ հիմնուել են Ֆրանսիայում եւ Կանադայում, որոնցից առաջինը 1996-ին լոյս է ընծայել «Լուսատուներ. սաները կը յիշեն» յուշագիրքը:

Կեդրոնականն այսօր ոչ միայն «ուսեալ ազգի վկայագիր» է, այլեւ «վկայագրում է» յիշարժան իրադարձութիւնները, ինչպէս տարբեր «Տարեգրութիւնները», «Յուշամատեան Կեդրոնական վարժարանի հարիւրամեակին» (1986թ.), «Յարգանք կեդրոնականցիներու Շիշլիի գերեզմանատան մէջ / 29 Ապրիլ, 2012» (2012թ.), «Դանիէլ Վարուժան: Անմահ բանաստեղծ, ուսուցիչ, մտաւորական: 1884-1915» (2015թ.), «Հայ դպրոցը անցեալէն դէպի այսօր» (2017թ.), «Յիշելով Կոմիտասը» (2019թ.) եւ այլ գրքոյկներն են ապացուցում: Վերջերս վարժարանը հրամցրեց եւս մէկ ուսանելի ձեռնարկ՝ «Հայ կինը մշակութային եւ հասարակական կեանքի մէջ» հանդիսութիւնը, որը բեմադրուել է պոլսահայ տարբեր վարժարաններում ու մշակութային օջախներում: «*Որքան որ ծանօթ ենք Սփիւռքէն կամ Հայաստանէն հասած լրատուութիւններուն, աննախընթաց ու աննախադէպ միջոցառում մըն էր Կեդրոնականցիներու պատրաստած ձեռնարկը, արժանի՝ մեծ ու անվերապահ գնահատանքի*»,- նկատում է «Մարմարա» օրաթերթի փոխխմբագիր Նաիրա Մկրտչեան-Սիւզմէն (https://www.normarmara.com/arsiv2023-1/050623lu.html):

Կեդրոնականի պատմութեան հրաշալի վկայութիւններից մէկն էլ 2012թ. Գրիգոր աւագ քահանայ Տամատեանի կազմած «Քայլեր դէպի Կեդրոնական Ազգային վարժարան» գիրքն է, որտեղ վաւերագրերից եւ տեղեկագրերից քաղուած հարուստ նիւթի վրայ շարադրուած են դեռեւս Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի գործունէութեան շրջանից սկիզբ առնող Պոլսոյ կրթական

համայնապատկերը եւ այդ համատեքստում Կեդրոնականի անցած ճանապարհը **(Տամատեան Գ., 2012)**:

Վարժարանի պատմութեան մէջ պակաս ուշագրաւ չեն նաեւ հայրենիքի հետ համագործակցութեան էջերը, որոնք գալիս են դեռ նախանցեալ դարից՝ 1898-ից, երբ Հրաչեայ Աճառեանը ծառայութեան անցաւ Մայր Աթոռում: Տարիների ընթացքում հայրենիքում են հաստատուել ամենատարբեր մասնագիտութիւնների շրջանաւարտներ, այդ թւում՝ բանաստեղծներ Հայկազուն Գալուստեանն ու Վարդերես Գարակէօզեանը:

Յատկանշական պիտի դիտել նաեւ վարժարանի հիմնադրման 90-ամեակի տօնակատարութիւնների շարքում Հայաստանում առաջացած ոգեւորիչ մթնոլորտը, ինչի մասին կարդում ենք յայտնի արխիւագէտ, բանասէր Գոհար Ազնաւուրեանի՝ ամերիկահայ արձակագիր Յակոբ Ասատուրեանին ուղղուած նամակում. «*Ամսի* (Ապրիլի - հեղինակներ) *29-ին Սփիւռքի կոմիտէում Պոլսի Կեդրոնական վարժարանի հիմնադրման 90-ամեակն են նշելու, ուզում եմ գնալ եւ լսել*» **(ԳԱԹ, թիւ 417)**:

Արդէն անկախութեան տարիներին, մասնաւորաբար 1993-ից, Հայաստանի համալսարաններում ուսում են ստանում նոր սերնդի կեդրոնականցիները: Պետական մի շարք ծրագրերի շրջանակներում աշակերտները եւ ուսուցիչներն այցելում են հայրենիք, ճանաչում իրենց ակունքները, մասնակցում տարատեսակ վերապատրաստումների, գիտաժողովների ու հանդիսութիւնների: Վարժարանը համագործակցում է Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի հետ:

Կեդրոնական վարժարանն այսօր սերտ կապեր ունի նաեւ Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ: 2016-ին «Հայկական ինքնութեան քննական մօտեցումներ 21-րդ դարուն. խոցելիութիւն, առաձգականութիւն եւ փոխակերպութիւն» թեմայով միջազգային գիտաժողովի շրջանակներում Ստամբուլ այցի ընթացքում ՀՊՄՀ-ի Վաչէ Պարտիզունու անուան հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի

ամբիոնի վարիչ, «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրէն Սուրէն Դանիէլեանը եղել է Կեդրոնական վարժարանում, աշակերտների հետ հանդիպում ունեցել եւ դաս վարել, ինչպէս նաեւ աւագ դասարանների աշակերտներին ներկայացրել համալսարանի գործունէութիւնն ու հրաւիրել ուսումը շարունակելու հայրենիքում **(https://aspu.am/hy/content/suren_danielyany_masnakcec_mijazgayin_gitazhoghovi/#sthash.3RjSJGf6.dpbs)**:

Նոյն տարուայ Մայիսի 26-27-ին ՀՊՄՀ-ի «Սփիւռք» կենտրոնի, հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի, մասնագիտական կրթութեան եւ կիրառական մանկավարժութեան (այժմ՝ մանկավարժութեան ամբիոն) ամբիոնների նախաձեռնութեամբ կազմակերպուել է միջազգային երկօրեայ գիտաժողով՝ նուիրուած Յովհաննէս Հինդլեանի 150-ամեակին, որին մասնակցել է Պոլսի Կեդրոնական վարժարանի տնօրէն Սիլվա Գոյումճեանը եւ հանդէս եկել մեծ մանկավարժի գործունէութեան մասին «Յովհաննէս Հինդլեան՝ մտաւորական մանկավարժը» զեկոյցով, ներկայացրել կրթական գործչին՝ որպէս Կեդրոնական վարժարանի ուսուցիչ եւ տնօրէն, մանկավարժ, հրապարակագիր, անդրադարձել աշակերտների յուշերին եւ վկայութիւններին **(«Յովհաննէս Հինդլեան 150», 2016)**:

2017-ին Կեդրոնական վարժարանը նշեց կազմաւորման 130-ամեակը: «Հայ դպրոցը անցեալէն դէպի այսօր» յոբելենական հանդիսութեանը մասնակցել է հայ նոր եւ նորագոյն գրականութեան ամբիոնի դոցենտ, «Սփիւռք» կենտրոնի գիտական աշխատող Ք. Աբրահամեանը, ընթերցել ՀՊՄՀ ռեկտոր, Պրոֆեսոր Ռուբէն Միրզախանեանի շնորհաւորագիրը, հանդէս եկել ելոյթով **(«Ժամանակ», 2017)**: Իր հերթին վարժարանի տնօրինութիւնը կենտրոնի տնօրինութեանը եւ Ք. Աբրահամեանին յանձնել է շնորհակալագրեր:

2019 թ. Հոկտեմբերի 18-19-ը Կոմիտաս Վարդապետի ծննդեան 150-ամեակի առթիւ Կեդրոնական վարժարանի նախաձեռնութեամբ Պոլսում տեղի ունեցած

«Յիշելով Կոմիտասը» խորագրով երկօրեայ հանդիսութիւններին Ք. Աբրահամեանը խօսել է Կոմիտասի դերի, վարժարանի որդեգրած հայապահպան առաքելութեան ու միջոցառումից ստացած տպաւորութիւնների շուրջ: Նա մասնակցել է վարժարանի ուսուցիչների եւ հիւրերի համար կազմակերպուած կլոր սեղան-քննարկմանը, հանդիպումներ ունեցել պոլսահայ մտաւորականների, գրողների հետ (https://aspu.am/hy/content/qnarik_abrahamyany_masnakce_hishelov_komitasin_mijocarmany/#sthash.6YmbFY9N.2iWu04eb.dpbs):

2023-ի Հոկտեմբերին Թարգմանչաց տօնի շրջանակներում կազմակերպուած «Պոլսահայ նորագոյն գրականութիւնը 20-րդ դարի կէսից մինչեւ մեր օրերը» ժողովածուի շնորհանդէսի համար Պատրիարք Նորին Ամենապատուութիւն Սահակ Բ. Մաշալեանի հրաւէրով Ս. Դանիէլեանը եւ Ք. Աբրահամեանը դարձեալ Պոլսում էին: Նրանք բանախօսութեամբ հանդէս եկան Էսայեան, Սահակեան-Նունեան, Սուրբ Խաչ Դպրեվանքի եւ, արդէն ձեւաւորուած աւանդոյթի համաձայն, Կեդրոնական վարժարանի աշակերտութեան համար (**http://www.normarmara.com/arsiv2023-2/181023lu.html**):

Այս նախաձեռնութիւնների շարքին գալիս է միանալու ՀՊՄՀ-ի ստորաբաժանումների՝ տուեալ պարագային մանկավարժութեան ամբիոնի եւ «Սփիւռք» կենտրոնի համագործակցութեամբ «Ուսեալ ազգի վկայագրերը» խորագրով նախագիծ-օրինակը՝ ուսանող-դասախօս համատեղ աշխատանքի ձեւաչափով, վարժարանի տնօրէնի՝ ուսանողներին ուղղուած ոգեւորիչ խօսքով (https://aspu.am/hy/content/ampopvec_usyal_azgi_vkayagrery_mrcuyty/#sthash.Fm3CKg3k.dpbs):

Կեդրոնական վարժարանը նաեւ գիտահետազօտական աշխատանքի նիւթ է. կրթօջախի մասին թեզի վրայ է աշխատում (գիտական ղեկավար՝ Ք. Աբրահամեան) վարժարանի շրջանաւարտ, այժմ մանկավարժական համալսարանի մագիստրոս Պետրոս Չաւիքեանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայ դպրոցի ու մանկավարժութեան պատմութեան ուսումնասիրութիւնը նախեւառաջ մեր մշակոյթի ու ինքնութեան կարեւոր բաղադրիչներից մէկի ճանաչողութեան անհրաժեշտութեամբ է պայմանաւորուած: Այն կարեւոր կռուան է աւանդոյթի ու շարունակականութեան յարաբերակցութեան մէջ տեսնելու երեւոյթները: Ուշադիր «ընթերցման» պարագայում այդ պատմութեան էջերում կարելի է տեսնել այնպիսի շեշտադրումներ, որոնք, թւում է, մանկավարժական միտքը, եւ ոչ միայն հայ, նոր նոր է փորձում բացայայտել: Սա են վկայում այն համադրումները, որոնք փորձ է արուել կատարել այս աշխատանքում:

Կեդրոնական վարժարանի օրինակով հայրենիքի ու Սփիւռքի միջեւ երեւան բերուած կրթամշակութային երկխօսութեան այս ձեռնարկումները երկուստեք հարստացնում են ոչ միայն կրթօջախների պատմութիւնը, այլեւ համահայկական նոր նախաձեռնութիւնների հուն բացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. «**Արեւելք**» **(1886)**, Օրագիր քաղաքական եւ ազգային, Կ. Պոլիս, Գ. տարի, 6 Սեպտեմբեր, թիւ 802:
2. «**Արեւմտահայ գրողների նամականի**» **(1972)**, Երեւան, Երեւանի համալսարանի հրատ.:
3. **ԳԱԹ** (Եղիշէ Չարենցի անուան գրականութեան ու արուեստի թանգարան), Յակոբ Ասատուրեանի ֆոնդ, թիւ 417:
4. **ԳԱԹ** (Եղիշէ Չարենցի անուան գրականութեան ու արուեստի թանգարան), Արշակ Չօպանեանի ֆոնդ, թիւ 810-Х:
5. «**Ժամանակ**» **(2017)**, Քաղաքական ժողովրդական օրաթերթ, Իսթանպուլ, 15 Մայիս:
6. «**Կեդրոնական ազգային վարժարանի դարադարձի հանդիսութիւն (1886-1986), Հոկտեմբեր 11, 12**» **(1986)**, Նիւ Եորք, հրատ. «Ոսկետառ»:
7. **«Հայկական նամականի» (1872), գրեց Վրոյր**, Զմիւռնիա, տպ. Տէտէեան:

8. «**Յովհաննէս Հինդլեան 150**» **(2016)** / միջազգային երկօրեայ գիտաժողովի նիւթեր, Երեւան, հրատ. «Զանգակ 97»:
9. **Յակոբեան Գ. (2016)**, Պատմութիւն Իսթանպուլահայ ուսումնական կեանքի եւ կրթական հաստատութիւններու, Իսթանպուլ, հրատ. “Paros Yayincilik”, Ա. տպ.:
10. **Յակոբեան Գ. (2024)**, «Հայոց կրթական հաստատութիւններու պատմութիւն՝ օսմանեան գաւառներու մէջ», Ա. հատոր, Բ. հատոր, Իսթանպուլ, հրատ. «Paros Yayincilik»:
11. «**Յուշամատեան Կեդրոնական վարժարանի հարիւրամեակին. 1886-1986**» **(1986)**, խմբագիր Հրանդ Աճէմեան, Փարիզ, հրատ. Կեդրոնական սանուց միութեան:
12. «**Յուշապրակ նուիրուած Կեդրոնական վարժարանի 90 ամեակին**» **(1977)**, պատրաստեց Վարդան Կոմիկեան, Իսթանպուլ:
13. **Ոսկանեան Շ. (2009)**, Ուրուագծեր արեւմտահայ դպրոցի եւ մանկավարժական մտքի պատմութեան (1850-1920), Երեւան, 2-րդ հրատ.:
14. **Չօպանեան Ա. (1980)**, Նամականի, Երեւան, հրատ. «Սովետական գրող»:
15. «**Պայքար**» **(1950),** Օրաթերթ ազգային, քաղաքական, գրական, թիւ 303(12670), 16 Դեկտեմբեր, Բոստոն:
16. «**Պաշտօնագիր, կանոնագիր եւ յայտագիր խնամակալութեան Ազգային Կեդրոնական Վարժարանին Ղալաթիոյ**» **(1886)**, Կ. Պոլիս, տպ. Մ. Գ. Սարրեան:
17. **Սիրունի Յ. (2006)**, Ինքնակենսագրական նօթեր, Երեւան, Սարգիս-Խաչենց:
18. **Ստեփանեան Յ. (2012)**, Հայերի ներդրումն Օսմանեան կայսրութիւնում, 2-րդ վերամշակուած հրատ., Երեւան, ԵՊՀ հրատ.:
19. **Տամատեան Գ. (2012)**, Քայլեր դէպի Կեդրոնական Ազգային վարժարան, Իսթանպուլ:

20. https://aspu.am/hy/content/suren_danielyany_masnakcec_mijazgayin_gitazhoghovi/#sthash.3RjSJGf6.dpbs: / դիտուել է 14.06.2023. /Սուրէն Դանիէլեանը մասնակցեց գիտաժողովի/
21. https://aspu.am/hy/content/qnarik_abrahamyany_masnakce_hishelov_komitasin_mijocarmany/#sthash.6YmbFY9N.2iWu04eb.dpbs /դիտուել է 14.06.2023. /Քնարիկ Աբրահամեանը մասնակցեց «Յիշելով Կոմիտասը» միջոցառմանը /
22. https://aspu.am/hy/content/ampopvec_usyal_azgi_vkayagrery_mrcuyty/#sthash.Fm3CKg3k.dpbs / դիտուել է 08.02.2024. /Ամփոփուեց «Ուսեալ ազգի վկայագրերը» մրցոյթը/
23. http://www.normarmara.com/arsiv2023-2/181023lu.html/ մուտք 10.02.2024: /Պէյօղլուի մէջ հիւրեր/
24. https://www.normarmara.com/arsiv2023-1/050623lu.html / դիտուել է 14.06.2023:

REFERENCES

1. **"Arewelq" /"East"/ (1886)**, O'ragir qaghaqakan ew azgayin /Political and national daily/, Constantinople, C. year, September 6, N 802.
2. **"Arewmtahay groghneri namakani" /"Literary Correnspondence of Western Armenian Writers"/ (1972)**, Yerevan, YSU publishing house.
3. **GAT (Museum of literature and art after Yeghishe Charents)**, Hagop Assadourian's archive, N 417.
4. **GAT (Museum of literature and art after Yeghishe Charents)**, Arshak Chopanyan's archive, N 810-X.
5. **"Jhamanak" /"Time"/ (2017)**, Political national daily, Istanbul, May 15.
6. **«Kedronakan azgayin varjharani daradard'i handisowt'iwn (1886-1986) /"Ceremony of Getronagan lyceum 100th anniversary (1886-1986)/, October 11, 12" (1986)**, N.Y., "Vosketar".
7. **"Haykakan namakani" /"Armenian letters"/ (1872),** written by Vruyr, Smyrna, publ. Teteyan.
8. **"Hovhannes Hindlian 150" (2016)**, materials of two day international conference, Yerevan, "Zangak 97".
9. **Hagopian K. (2016)**, Patmowt'iwn Ist'anpowlahay owsowmnakan keanqi ew krt'akan hastatowt'iwnnerow /History of educational life and educational institutions of Constantinoplean Armenian/, Istanbul, 1st publ, publ. Paros Yayincilik.
10. **Hagopian, K. (2024)**, «Hayoc krt'akan hastatowt'iwnnerow patmowt'iwn՝ o'smanean gawar'nerow me'j» /History of educational institutions in Ottoman Provinces/, Vol. 1, Vol. 2, Istanbul, publ. Paros Yayincilik.
11. **"Yowshamatean Kedronakan varjharani hariwrameakin. 1886-1986" /"Memory book of Getronagan's 100th anniversary"/ (1986)**, edited by Hrand Ajemian, Paris, publ. Union of Getronagan alumni.

12. **"Yowshaprak nowirowac' Kedronakan varjharani 90 ameakin" /"Memory book donated to Getronagan's 90th anniversary"/ (1977)**, compiled by Vartan Komikian, Istanbul.
13. **Voskanyan Sh. (2009),** Owrowagc'er arewmtahay dproci ew mankavarjhakan mtqi patmowt'ean (1850-1920) /Shapes of history of Western Armenian school and teaching mind (1850-1920)/, Yerevan, 2nd publ.
14. **Chopanyan A. (1980)**, Namakani /Letters/, Yerevan, "Sovetakan grogh".
15. **"Payqar" /"Struggle"/ (1950),** national, political, literary daily, N 303(12670), 16 December, Boston.
16. **Pashto'nagir, kanonagir ew yaytagir xnamakalowt'ean Azgayin Kedronakan Varjharanin Ghalat'ioy /"Official Document, Rulebook and programm of Guardianship of Getronagan National Lyceum"/ (1886),** Constantinople, publ. M. G. Sariyan.
17. **Siruni H. (2006)**, Inqnakensagrakan no't'er /Autobiographical notes/, Yerevan, Sargis Khacehents.
18. **Stepanyan H. (2012)**, Hayeri nerdrowmn O'smanean kaysrowt'iwnowm /The Input of Armenians in the Ottoman Empire/, second edition, Yerevan, YSU publishing house.
19. **Damadian K. (2012)**, Qayler de'pi Kedronakan Azgayin varjharan /Steps to Gedronagan Armenian High School/, Istanbul.
20. https://aspu.am/hy/content/suren_danielyany_masnakcec_mijazgayin_gitazhoghovi/#sthash.3RjSJGf6.dpbs: / access: 14.06.2023. /Suren Danielyan Participated in an International Conference/
21. https://aspu.am/hy/content/ampopvec_usyal_azgi_vkayagrery_mrcuyty/#sthash.Fm3CKg3k.dpbs / access: 08.02.2024: /Results of "Evidence of an Educated Nation" competition summed up/

22. https://aspu.am/hy/content/qnarik_abrahamyany_masnakce_hishelov_komitasin_mijocarmany/#sthash.6YmbFY9N.2iWu04eb.dpbs / access: 14.06.2023. /Knarik Abrahamyan Participated in a ceremony "Remembering Komitas"/
23. http://www.normarmara.com/arsiv2023-2/181023lu.html / access. 10.02.2024. /Guests in Beyoglu/
24. https://www.normarmara.com/arsiv2023-1/050623lu.html, access: 14.06.2023.

Грета Акопян, Кнарик Абраамян

Центральный лицей Константинополя в пересечении путей сохранения национальной

Заключение

Ключевые слова и выражения: *Центральный лицей Константинополя, образовательные и культурные традиции, образовательные программы, сотрудничество между родиной и диаспорой, национальный облик.*

Статья подготовлена в рамках конкурса «Свидетельства образованной нации», объявленного в 2023 году Армянским Государственным Университетом имени Х. Абовяна и Музеем-институтом геноцида армян, как проектная работа и пример сотрудничества преподавателей и студентов.

В статье обсуждаются вопросы, связанные с основанием и деятельностью Центрального лицея в Константинополе. Деятельность лицея анализирована на фоне геополитических и литературно-культурных событий в течении всей истории лицея. Представлены также известные учителя и выпускники лицея. Охарактеризованы вопросы школьного управления, учебных программ и их соответствии к современным образовательным стандартам. Рассмотрена деятельность лицея в настоящее время как важное образовательное и культурное событие в контексте современных вызовов. Охарактеризовано сотрудничество

лицея и армянского государственного педагогического университета им. Х. Абовяна в рамках связи и культурного-образовательного взаимодействия Родина-Диаспора.

Работа написана с использованием историко-сравнительного метода. Образовательная деятельность Центрального лицея представлена в контексте современных представлений об образовательных стандартах.

Greta Hakobyan, Knarik Abrahamyan

Getronagan Armenian High School (Lyceum) in Constantinople (Istanbul) in the Crossroads of Preserving the National Identity

Conclusion

Keywords and expressions: *Getronagan Armenian High School, educational and cultural traditions, curricula, cooperation between the homeland and the Diaspora, national profile.*

The article was prepared within the framework of the "Documents of an Educated Nation" competition announced in 2023 by the Khachatur Abovian Armenian State Pedagogical University and the Armenian Genocide Museum-Institute, as a project work and an example of lecturer-student collaboration.

The article discusses matters related to the establishment and activities of the Getronagan Armenian High School in Istanbul (Constantinople), Turkey. The history of the High School has been analysed against the backdrop of geopolitical and literary-cultural events. Eminent scholars and alumni of the High School have been presented. Matters concerning the High School management, curricula and their alignment with contemporary educational standards have been characterised. The current activity of the High School has been presented as a significant educational and cultural establishment in the context of modern world challenges. The cooperation of the High School and Kh. Abovyan Armenian State Pedagogical University has been observed in

the context of the relationship between the homeland and the Diaspora as well as from the perspective of educational and cultural interaction.

The work is written using a historical-comparative method. The educational activities of the Getronagan Armenian High School are presented within the context of contemporary understandings of educational standards.

Գրետա Յակոբեան - Մանկավարժական գիտութիւնների թեկնածու, Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ մանկավարժութեան ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրութիւնները՝ անձի հոգեւոր զարգացում, սովորողների գիտելիքների գնահատման նորագոյն միջոցներ, ակմէոլոգիայի, ուսուցիչների վերապատրաստման արդի հիմնախնդիրներ, մանկավարժական պրակտիկայի կազմակերպման մեթոդաբանական հարցեր, կրթութեան փիլիսոփայութեան հիմնահարցեր, մանկավարժական հետազօտութիւնների մեթոդաբանութիւն, էթնոմանկավարժութիւն: Հեղինակ է ուսումնամեթոդական 5 ձեռնարկի եւ 76 գիտական յօդուածի: hakobyangreta@gmail.com

ORCID ID https://orcid.org/0000-0002-0038-3983

Քնարիկ Աբրահամեան – Բանասիրական գիտութիւնների թեկնածու, Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի Վ. Պարտիզունու անուան հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ: Հեղինակ է երկու գրքի եւ չորս տասնեակից աւելի յօդուած-ուսումնասիրութիւնների, խմբագրել է Սփիւռքի գրականութեանը վերաբերող տասնեակ ժողովածուներ: Գիտական հետաքրքրութիւնների շրջանակն ընդգրկում է արեւմտահայ դասական եւ սփիւռքահայ գրական հարցադրումները, օտարագիր գրականութիւնը, արեւմտահայերէնը: abrahamyanknarik21@aspu.am

ORCID ID: https://orcid.org/0000-0002-7151-2172

Грета Акопян - Кандидат педагогических наук, доцент кафедры педагогики АГПУ им. Х Абовяна. Научные интересы: Духовное развитие личности, новейшие

средства оценивания знании учащихся, современные проблемы акмеологии, переподготовки учителей, методологические вопросы организации педагогической практики, вопросы философии образования, методология педагогических исследовании, этнопедагогика. Является автором пяти учебно-методических пособий и 76 научных статей.

hakobyangreta@gmail.com

ORCID ID https://orcid.org/0000-0002-0038-3983

Кнарик Абраамян - Кандидат филологических наук, доцент кафедры новой и новейшей армянской литературы и методики ее преподавания им. Вачэ Партизуни АГПУ им. Х. Абовяна. Автор 2 монографий и 40 статей, редактировала десятки книг по западноармянской литературе. Сфера научных интересов – история западноармянской и зарубежной армянской литературы, западноармянский язык. abrahamyanknarik21@aspu.am

ORCID ID: https://orcid.org/0000-0002-7151-2172

Greta Hakobyan - PhD of Pedagogical Sciences, Associate Professor, Chair of Pedagogy Kh. Abovyan ASPU. Scope of Academic Interests: Individual's spiritual development, modern means of assessing learners' knowledge, current issues in acmeology and teacher training, methodological issues in organising pedagogical internship, philosophy of education, methodology of pedagogical research, ethnopedagogy. Author of five educational-methodological manuals and 76 scientific articles. hakobyangreta@gmail.com

ORCID ID https://orcid.org/0000-0002-0038-3983

Knarik Abrahamyan - Candidate of Philological Sciences, Associate Professor of the Department of New and Contemporary Armenian Literature and Methods of Teaching it named after Vache Partizuni of the Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan. Author of 2 monographs and 40 articles, edited dozens of books on Western Armenian literature. Her research interests include the history of

Western Armenian and foreign Armenian literature, and the Western Armenian language. abrahamyanknarik21@aspu.am

ORCID ID: https://orcid.org/0000-0002-7151-2172

Խմբագրություն է ուղարկվել 30.12.2024թ.

Հանձնարարվել է գրախոսության 17.01.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 21.03.2025թ.